

Չնաղ է **Ս-նյաց** աշխարհը՝ **գոտ-որված** գմբուխտ անտառներով, **սիգապան-** ու երկնասլաց լեռներով, ոչ **առօր-ական**, զարմանահրաշ իր **հո-երգական** պատկերներով: **Խրո-տ** լեռնաշղթաների **գո-ում** **որոտ-նդոստ** շառայունով գալարվում է Ռոտտանը՝ տեղացիների **ը-րոստ** ոգու խորհրդանիշը: Այստեղ՝ վիհի եզրին, հառնում է յուրօրինակ ու չնաշխարհիկ մի համալիր՝ միջնադարի շքեղակառույց վանքերից մեկը՝ Տաթևավանքը:

Մեր ժողովուրդ, ի վերուստ **օ-տված** լինելով տիեզերածավալ երևակայությամբ, հրաշապատում ու **մտա-ածին** գրույցներ է հյուսել վանքի մասին:

Պատմում են, որ քարգործ վարպետը **եր-վել** է կարճ ժամանակում կանգնեցնել եկեղեցու **որ-աքարե** որմերը, աշխատել առանց դադարի, **գ-րուզիշեր**՝ **վաղորդ-նից** մինչև մթնշաղ:

Կառույցն ավարտելու օրը, երբ տեղադրել է տաճարի վերջին քարը, նա, սրբելով խորշումած ճակատի **քր-ինքը**, աչքերը հառել է երկնքին և **մա-թանքներ** հղել առ Աստված: Սակայն տեսնելով, որ կանգնած է **սահմ-կեցնող** բարձունքի վրա, **թ-րտացող** սրտով մրմնջացել է.

- Երանի՛ Սուրբ Հոգին տա թև:

Լսելով վարպետի սրտագին մրմունջը՝ Բարձրյալը, ասում են, թևեր է **պար-նել** նրան: Այդ օրվանից վանքը կոչվել է Տաթև:

1. Տեքստից դուրս գրի՛ր թավ գրված բառերը՝ լրացնելով բաց թողնված տառերը:

(2 միավոր)

2. Տեքստում գտի՛ր տրված բառերի հոմանիշները՝ **պարփակել, մայրի, վեհ, առտնին, ահեղագոչ, խորխորատ, ապստամբ, ուրույն, անըստգյուտ, անպարագիծ, անիրական, ճրագալույց, կնճռոտ, սևեռել հոգեբուխ:**

(3 միավոր)

3. Բառակազմորեն վերլուծի՛ր տրված բառերը՝ ընդգծելով արմատը մեկ, ածանցը երկու գծով՝ **երկնասլաց, խորհրդանիշ, յուրօրինակ, չնաշխարհիկ, միջնադար, շքեղակառույց, տիեզերածավալ, երևակայություն, հրաշապատում, սրտագին:**

(2 միավոր)

4. Կազմի՛ր 3 նախադասություն **աչքերը փակ** դարձվածքի բազմիմաստություններով:

(3 միավոր)

5. Գրի՛ր **մասին, սրբեր, կարգում, գամ** բառերի համանունները և բացատրի՛ր:

(2 միավոր)

6. Կազմի՛ր նախադասություններ **վերաբերել-վերաբերվել, պահպանել-պաշտպանել** հարանուններով:

(2 միավոր)

7. Գրի՛ր նամակ սփյուռքում ապրող քո հասակակցին (երկու էջի սահմաններում):

(6 միավոր)